

ւերով կ'ապրէր հայ եպիսկոպոս մը որ արժանութիւն առաւ կայսրէն այցելելու Նեղոսի աղբիւրները եւ կ'ըսուի թէ՝ այս հայ կրօնաւորն էր որ յաջողեցաւ առաջին անգամ ճշդել հռչակաւոր գեօքն ծնունդ առած վայրերը. միւս բոլոր եւրոպացի ուղեւորները որոնք այդ գիտական արեւաւանքը կ'առաւելցին, հայ նաճապարհորդէն վերջը կու գան: Կարելի չեղաւ ճշդել թէ ո՞վ էր այս եկեղեցականը, որուն կ'իյնայ պատիւը աշխարհագրական մեծ գիւտի մը (Արեւ, 22 Փետր. 1935):

Ահա Արքաւ Հր Մասգրիէի գիրքին այն մասերը, զորս իմ գիմուսիս վրայ Պ. Յ. Նալբանդեան տրամագրեց ինծի(1).

«Երկու իրարու մերձաւոր լեռներու կուրծքէն, որոնց վերեւ երկու բարձրադիր դղեակներ կը տեսնուին, կ'իջնէին երկու խոշոր վտակներ, որոնք կ'իյնային դաշտին մէջ եւ կը միանային Կամպէա լիճին, ուրկէ յետոյ կ'ելլէր այս հռչակաւոր գետը՝ սկիզբները փոքր գետակի մը ձեւին տակ: Այս տեղեկութիւնը ինծի հաստատեց հայ եպիսկոպոս մը՝ որ եթովպիոյ արքունիքը գտնուելով թագաւորէն արտօնութիւն ստացած էր տեսնելու Նեղոսի աղբիւրները»:

Կարծեմ առանց վարանման կարելի է ճշդել. թէ ո՞վ այս հայ եկեղեցականը:

Բացորոշ է. որ Յովհաննէս Թիւթիւնճին է աւ, որ իր ճամբորդութեան նկարագրութեան մէջ կը գրէ հետեւեալ տողերը (առջ. 104-113).

(1) Իր յօդուածաւրբին մէջ աղբիւրը չէր նշանակած, այլ, ինչպէս կը տեսնուի, րաւ էր ձխիս հետաքրքրական յիշատակութիւն մը: